



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

« 27 » « հուլիս » 2022թ. № 572-Վ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 6-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելված 26-րդ կետի 11-րդ ենթակետով, առաջին փոխվարչապետի 2018 թվականի հուլիսի 31-ի N 29-Ն որոշման հավելվածի 4-րդ և 7-րդ կետերով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից 2022 թվականի հուլիսի 25-ի N 42/45.45/24157 գրությամբ ներկայացված համաձայնությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ '

1. Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 10-ի «Շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 15-ի N 476-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Լ հրամանում կատարել հետևյալ լրացումները.

1) հրամանով հաստատված 342-րդ և 348-րդ հավելվածներում՝ շրջակա միջավայրի նախարարության իրավաբանական վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-32.4-Մ2-8) և շրջակա միջավայրի նախարարության իրավաբանական վարչության ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-32.4-Մ4-3) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.


«3.1. Կրթություն, որակավորման աստիճանը»

Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
Ոլորտ	Իրավունք
Ենթաօլորտ	Իրավունք

Մասնագիտություն	042101.00.6 Իրավագիտություն
-----------------	-----------------------------

»

7/27/2022

X 

ԳՐԻԳՈՐ ԳՈՒԼՅԱՆ

Signed by: GULYAN GRIGOR 3202780018

Գ.ԳՈՒԼՅԱՆ

« 27 » հուլիսի 2022թ.
ք. Երևան